Մասնագիտական Կրթության և Ուսուցման Ոլորտում Աշկերտների և Երիտասարդ Այլ Անձանց Շարժունությանն Առնչվող Խոչընդոտների Հաղթահարում

Ամփոփ Զեկույց

գործիք

2007թ. ապրիլ

ԱՆՕՐ

PRICEWATERHOUSECOOPERS

Սույն փաստաթուղթը հանդիսանում է որպես «Նախնական մասնագիտական ուսուցման ոլորտում աշկերտների և երիտասարդ այլ անձանց վերազգային շարժությանն առնչվող խոչընդոտների և դրանց հաղթահարման եղանակների վերաբերյալ ուսումնասիրության» վերջնական զեկույց, որը հիշատակվում է նաև որպես Գործիր (MoVE-iT) ծրագիր:
Զեկույցը ֆինանսավորվել և պատրաստվել է Եվրոպական Հանձնաժողովի, Կրթության և մշակույթի գլխավոր տնօրենների օգտագործման համար՝ համաձայն 2005-4579-001 PIL-PILOTR պայմանագրի:
Փաստաթղթի բովանդակությունն արտահայտում է միայն դրա հեղինակի կարծիքները և ոչ բոլոր դեպքերում է ներկայացնում Եվրոպական Հանձնաժողովի պաշտոնական դիրքորոշումը:

Ուսումնասիրության նախնական մանրամասները և նպատակները

ՆՄԿՈՒ շարժունության եվրոպական այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են Լեոնարդո դա Վինչին և դրա նախորդները, քսան տարվա աշխատանքը հանգեցրել է Եվրոպայում, որպես կրթության մի մասի, արտասահման մեկնող ՆՄԿՈՒ բոլոր մասնակիցների կայուն, սակայն համեմատաբար ցածր տոկոսային հարաբերության: Մինչ այժմ թվում էր, որ շահեկանությունը հիմնականում կապված էր բյուջեների մեծացման հետ. «բազմապատկչի» արդյունավետության ապացույցը բացակայում է մշտադիտարկման համապարփակ համակարգի բացակայության պատճառով: Վերջին 10 տարիների ընթացքում շարժունության տարեկան պահանջարկը չորս անգամ բարձր էր, քան առկա բյուջեն: Յուրաքանչյուր տարի բյուջեներն ամբողջովին սպառվում են: Բանավեճի առանցքային խնդիրներից մեկն այն է, թե արդյո՞ք Եվրոպական Հանձնաժողովը պետք է կատարի պետական ծախսեր՝ խթանելու աշկերտների և երտասարդ այլ անձանց շարժունությունը ՆՄԿՈՒ-ում, և ի՞նչ մակարդակի պետք է լինեն այդ ծախսերը: Եթե պետք է նպաստել աշկերտների շարժունությանը, և պահանջարկն ավելի բարձր է, քան ԵՄ առկա բյուջեները, ապա ՆՄԿՈՒ շարժունությունը մեծացնելու երկընտրանքները պետք է որոշարկվեն և զարգանան:

Եվրոպայում շարժունության և՛ քանակը, և՛ որակը բարձրացնելու, ինչպես նաև Հանձնաժողովի Լեոնարդո դա Վինչի ծրագրի գործունեությունը համալրելու համար Եվրոպական Կառավարությունն ընդունեց հատուկ գիծ 2005 և 2006թթ. բյուջեներում, որի ֆինանսները հատկացվելու էին աշկերտների և երիտասարդների շարժունությանը ՆՄԿՈՒ-ում: Բյուջեի այս գիծը ֆինանսավորեց 2005-2007թթ. իրականացված 3 հիմնական ուսումնասիրությունները՝ MoVe-iT (Գործիր)[1], որը որոշարկում և վերլուծում էր ՆՄԿՈՒ վերազգային շարժունությանն առնչվող խոչընդոտները, ECVET Connexion (ՄԿՈՒԵԿ Կապ)[2] և Reflector (Ռեֆլեկտոր[3]), որը վերլուծում էր ՆՄԿՈՒ-ում շարժունության եվրոպական համատեղ ճանաչման նախագծի ներմուծումը: Բացի այդ, 2006թ.-ին Եվրոպական Հանձաժողովը հրապարակեց 12 թռիչքային ծրագրերի առաջարկների վերաբերյալ հայտարարություն[4], որոնք պետք է հենվեին 3 ուսումնասիրությունների արդյունքում ստացված երաշխավորությունների վրա՝ դրանք վերափոխելով հստակ գործիքների և փորձերի: Մրցույթի հատուկ հայտարարության մեջ Հանձնաժողովը միևնույն ժամանակ ակնկալում էր գիտական փորձագիտություն՝ համալրելու և աջակցելու 12 թռիչքային ծրագրերին և՛ մշակման, և՛ տարածման փուլերում[5]:

---

1 http://www.europe-move-it.eu/
2 http://www.ecvetconnexion.com
3 http://www.ecvet.net
4 http://ec.europa.eu/education/programmes/calls/4506/index_en.html
5 http://ec.europa.eu/education/programmes/calls/4406/index_en.html

Ուսումնասիրության նպատակները

Ուսումնասիրության ընդհանուր նպատակը[6] հետևյալն էր.

«Խթանել դեպի որակավորումներն ուղղորդող վերազգային շարժունության զարգացումը որպես եվրոպական մակարդակում մասնագիտական ուսուցման ուղիների ամբողջական տարր՝ որոշարկելով դրա զարգացման համար բոլոր խոչընդոտները և իրագործելով դրանք հաղթահարելու հստակ որոշումները»:

Ուսումնասիրության հատուկ նպատակը բնութագրվեց.

«Վերլուծել մասնագիտական ուսուցման առկա համակարգերն ու շարժունության առկա փորձերը Եվրոպայում՝ եվրոպական մակարդակում հստակ որոշարկելու վերազգային շարժունության ընդհանուր խոչընդոտները, որը տանում է դեպի որակավորումներ՝ որպես մասնագիտական ուսուցման ուղիների ամբողջական տարր՝ գագաթնակետին հասցնելով որոշարկված խոչընդոտների հաղթահարման համար կատարված հստակ առաջարկները»:

Մեթոդաբանության ընդհանուր գաղափարը

Ուսումնասիրության մեթոդաբանությունը մշակվեց նախնական փուլում և հետագայում զարգացավ ուսումնասիրության ամբողջ ընթացքում՝ ուղղորդվելով ղեկավար կոմիտեի կողմից: Չնայած ուսումնասիրության հետազոտող բնույթը չի ենթադրում «ամրագրված» փուլեր, սակայն ուսումնասիրության ընդհանուր ուրվագիծը կարող է բնութագրվել յոթ փուլերով՝ յուրաքանչյուր փուլում մի քանի գործողություններ.

1. Ուսումնասիրության հայեցակարգային մոդելի հաստատում,
2. Խոչընդոտների որոշարկում /վիճակագրական փաստաթղթերի մշակում, ուսումնասիրություններ, հարցազրույցներ/,
3. Խոչընդոտների բաշխում՝ ըստ գերակայության /շահառուի հետ հարցազրույցներ, վիճակագրական փաստաթղթերի մշակում, փորձագիտական խումբ/,
4. Առաջարկների հստակ ձևավորում /փորձագիտական խմբեր, ցանցային խորհրդակցություններ/,
5. Լավագույն փորձի օրինակների որոշարկում / վիճակագրական փաստաթղթերի մշակում, ուսումնասիրություններ/,
6. Լուծման մոդելների մշակում /փորձագետների խումբ/,
7. Տարածում:

---

[6] Աղբյուր՝ EAC/34/05 (2004) Նախնական մասնագիտական ուսուցման մեջ աշկերտների և երտասարդ այլ անձանց վերազգային շարժունությանն առնչվող խոչընդոտների և դրանց հաղթահարման վերաբերյալ ուսումնասիրություն

Սույն ուսումնասիրությունում մենք բարձրացրել ենք արդյունքների որակը՝ կիրառելով եռանկյունավորման սկզբունքը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործված բազմազան աղբյուրները ներառում են հետևյալը.

- Փաստաթղթերի վերլուծություն,
- Փորձագետների խորհրդակցություն և շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներ,
- «ReferNet ուսումնասիրություն» եվրոպական 33 երկրներում[7] /շարժունության առկա քաղաքականությունների և փորձերի վերաբերյալ ուսումնասիրություն ՆՄԿՈՒ ազգային փորձագետների շրջանում/,
- Եվրոպական 33 երկրներում ՆՄԿՈՒ համակարգային բնութագրիչներ,
- ՆՄԿՈՒ մասնակիցների շրջանում չորս ուսումնասիրություններ (առաջինը՝ արտասահմանում աշխատանքի/ուսումնառության փորձերի նկատմամբ վերաբերմունքի մասին, երկրորդը՝ արտասահմանի փորձերի մասին, երրորդը տուրիզմի ոլորտի երիտասարդների շրջանում, իսկ չորրորդը՝ ՆՄԿՈՒ-ի երիտասարդների շրջանում), ուսումնասիրություններ /արտասահման մեկնած աշկերտներ, ինչպես նաև ՄԿՈՒ երիտասարդ այլ անձինք/,
- ՄԿՈՒ ապահովողների ուսումնասիրություն,
- Արվեստների և արհեստների, տուրիզմի և քիմիկատների վերաբերյալ ճյուղային ուսումնասիրություններ:

Եզրույթների սահմանում

Շարժունություն

Վերազգային շարժունությունն այս ուսումնասիրության շրջանակներում սահմանվում է որպես կացություն արտասահմանում, որը կազմակերպվում է ճշգրիտ ուսումնառության նպատակների համար: Սա ՆՄԿՈՒ մասնակիցներին վարձատրության հնարավորություն է ընձեռում արտասահմանում մնալու ընթացքում, սակայն «ապրուստ վաստակելը» /որպես շահութաբեր զբաղվածություն/ արտասահմանում մնալու ոչ պատճառը, և ոչ էլ նպատակն է: Վերազգային շարժունությունն այս ուսումնասիրությունում կենտրոնանում է արտասահմանում աշխատանքի տեղավորման վրա, որը մի հնարավորություն է, որ սահմանփակված չէ ոչ միայն աշկերտության համար, այլ նաև հանրակրթության վրա հիմնված ՆՄԿՈՒ համակարգերում:

---

7 Տե՛ս MoVE-iT, եվրոպական 33 երկրներում ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ համեմատական ուսումնասիրություն

Աշկերտներ

MoVE-iT ծրագրում մենք ընդունել ենք «աշկերտության» մասին CEDEFOP-ի սահմանումը, որը «պարբերաբար, երկարաժամկետ, միմյանց հաջորդող ժամանակահատվածներով ուսուցում է դպրոցում կամ ուսուցման կենտրոնում և աշխատավայրում. աշկերտը պայմանագրի միջոցով կապվում է գործատուի հետ և ստանում վարձատրություն /աշխատավարձ կամ օրաբաժին/: Գործատուն ստանձնում է պարտականություն՝ պատրաստվող անձին ապահովել որոշակի զբաղվածության մղող ուսուցմամբ»:

ՆՄԿՈՒ մասնակիցներ

«ՆՄԿՈՒ մասնակիցները» սահմանվում են որպես մարդիկ, ովքեր ներգրավված են մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերի մեջ ավագ միջնակարգ մակարդակում /Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում, ISCED մակարդակ 3/: Սա անկախ է նրանից, թե մասնակիցները ներգրավված են դպրոցի, թե աշխատանքի վրա հիմնված մասնագիտական կրթության կամ այլընտրանքային ուղիների մեջ: Սրանով իսկ, ՆՄԿՈՒ-ն նախագծվում է բարձրագույն կրթության կողմից, որը սույն ուսումնասիրության շրջանակներից դուրս է: MoVE-iT ուսումնասիրությունը կենտրոնանում է ՆՄԿՈՒ շարժունությունը խթանելու վրա: ՆՄԿՈՒ-ում ներգրավված անձանց մեծ մասը /ինչպես նշված է վիճակագրությունում/ գտնվում է 16-21տ. տարիքային միջակայքում:

Այս բրոշյուրը տալիս է MoVE-iT ուսումնասիրության հիմնական արդյունքների և խոչընդոտները հաղթահարելու համար մշակված երաշխավորությունների ամփոփիչ պատկերը: Նախևառաջ, այն ձևավորում է Եվրոպայում ՆՄԿՈՒ վերազգային շարժունության ընդհանուր պատկերը, իսկ այնուհետև բնութագրում է շարժունության և՛ շահեկանությունը, և՛ խոչընդոտները: Բրոշյուրի երկրորդ մասն ուրվագծում է այդ խոչընդոտները հաղթահարելու երաշխավորությունները:

ՆՄԿՈՒ շարժունությունը Եվրոպայում

Եվրոպայում ՆՄԿՈՒ վերազգային շարժունության միակ ամենակարևոր շարժիչ ուժը Եվրոպական Հանձնաժողովն է: Դա սկսվեց PETRA II ծրագրով /վերազգային շարժունությանը նվիրված առաջին ծրագիր, որը մեկնարկեց 1992թ.-ին/՝ հետևելով Լեոնարդո դա Վինչի ծրագրի առաջին և երկրորդ փուլերին /2006թ.՝ որպես վերջին տարի/: ՆՄԿՈՒ շարժունությունը նաև Ցկյանս ուսումնառության նոր ծրագրի գերակայություններից մեկն է: ՆՄԿՈՒ մասնակիցների /գնահատված/ թվաքանակը, ովքեր կմասնակցեն Լեոնարդո դա Վինչի II ծրագրի կողմից ֆինանսավորված վերազգային ստաժավորմանը /2000-2006թթ./, կլինի մոտ 40,012: Սա մոտավոր հաշվարկ է, քանի որ անցյալ տարվա ճշգրիտ թվերը դեռ հայտնի չեն: Սա ՆՄԿՈՒ վերազգային շարժունության ամբողջական պատկերը չէ: Տարբեր երկրներ օգտագործում են այլ ծրագրեր և ՆՄԿՈՒ մասնակիցների շարժունությունը խթանում

են այլ եղանակով: Հաճախ դա առնչվում է ոչ միայն եվրոպական ծրագրերին /Socrates, Youth/, այլ նաև ազգային /որոնցից մի քանիսը երկկողմանի են/, տարածաշրջանային և/կամ ոլորտային ծրագրերին, որոնց նպատակն է մեծացնել ՆՄԿՈՒ վերազգային շարժունությունը: Փոքր թվով երկրներ օգտագործում են ազգային կամ ոլորտային ծրագրեր, որոնք դիտարկում են ՆՄԿՈՒ վերազգային շարժունությունը որպես «կից արդյունք»:

Այնուամենայնիվ, երկրները միշտ չէ, որ ի վիճակի են լինում հաշվետու լինել վերազգային ստաժավորման մեջ ներգրավված ՆՄԿՈՒ մասնակիցների թվաքանակի մասին՝ մշտադիտարկման համակարգի բացակայության պատճառով: Հատկապես ազգային, տարածաշրջանային և/կամ ոլորտային ծրագրերը չեն մշտադիտարկվում պարբերաբար: Այլ ծրագրերի միջոցով ՆՄԿՈՒ վերազգային շարժունության մասին /մասնակի/ տվյալներ ապահովող երկրները մեծացնում են ՆՄԿՈՒ վերազգային շարժունությանը մասնակցության համընդհանուր ծավալները: Որոշ երկրներում ազգային այս ծրագրերի միջոցով մասնակցությունը ՆՄԿՈՒ վերազգային շարժունությանն ակնհայտորեն մեծացնում է Լեոնարդո դա Վինչի ծրագրով ներգրավված անձանց թվաքանակները: Այլ երկրներում Լեոնարդո դա Վինչի ծրագիրը դեռևս համարվում է հիմնական շարժիչ ուժ /ներգրավվածների թվաքանակի առումով/:
Վերազգային ստաժավորման գնացող ՆՄԿՈՒ մասնակիցները փոքր մաս են կազմում և շատ երկրներում չեն գերազանցում 1%-ը: Համամասնությունն այստեղ ՆՄԿՈՒ ամբողջ բնակչության տոկոսային հարաբերությունն է: ՆՄԿՈՒ վերազգային համամասնորեն բարձր շարժունությամբ երկրները երեքն են.

- Դանիա՝ ազգային շարժունության իր սեփական ծրագրով՝ PIU ծրագիր /Լեոնարդո դա Վինչի ծրագրից երեք անգամ ավել ստաժավորում/,
- Ֆինլանդիա՝ ակտիվ շարժունության քաղաքականությամբ /ազգային, երկկողմ և ոլորտային տարբեր ծրագրեր/ և մշտադիտարկման ազգային կայուն համակարգով,
- Կիպրոս:

Կան տարբերություններ ԵՄ և ԵԱԱՀ երկրների միջև՝ դրանցում ՆՄԿՈՒ համակարգի հզորության առումով, այն է՝ դրա հարաբերական չափաբաժինն ավագ միջնակարգ կրթության ամբողջական համակարգում, ինչպես նաև ՆՄԿՈՒ ապահովմանը բնորոշ առանձնահատկություններում /գլխավորապես աշխատանքի (աշկերտներ), դպրոցի կամ խառը համակարգի հիման վրա/: Ելնելով նրանից, որ համամասնական մասնակցությունը ՆՄԿՈՒ վերազգային շարժունությանը գրեթե չի տարբերվում երկներում՝ մենք չենք կարող եզրակացնել MoVE-iT ուսումնասիրությունից՝ արդյոք, ո՞ր համակարգին բնորոշ առանձնահատկությունները կամ տարբերություններն ունեն ազդեցություն ՆՄԿՈՒ վերազգային շարժունության իրողության վրա:

Ինչպես հաճախ ասվում է, ՆՄԿՈՒ վերազգային շարժունությունը չի մշտադիտարկվում պարբերաբար: Ոչ միայն քանակական մշտադիտարկման ու հետազոտական տվյալների բացակայություն կա, այլ նաև հետազոտական և զարգացման քիչ աշխատանք է տարվում շարժունության որակական այնպիսի հիմնախնդիրների տեսանկյունից, ինչպիսիք են ուսումնառության գործընթացները, հատուկ միջամտությունների և ուսումնառության արդյունքների միջև պատճառ հանդիսացող հարաբերությունները, վերազգային շարժունության ծրագրերին մասնակցության երկարաժամկետ ազդեցությունը /տևական ուսումնասիրությունների միջոցով/, ինչպես նաև տարբեր տեսանկյուններից վերազգային ստաժավորման շահեկանությունը /գործատուներ, ՄԿՈՒ հաստատություններ, ՆՄԿՈՒ մասնակիցներ/: Քանի դեռ ՆՄԿՈՒ-ում վերազգային ստաժավորման առավելությունների վերաբերյալ «հետազոտությունը» մատչելի է, կարելի է ասել, որ այն ավելի շատ մասնատված է՝ հաճախ կենտրոնանալով որոշակի երկրի մեկ կամ մի քանի հատուկ ճյուղերի վրա: Փոքր-ինչ ավելին պետք է իմանալ անհատական մակարդակում վերազգային ստաժավորման հետևանքների մասին, սակայն դա հաճախ ավելի շատ սուբյեկտիվ բնույթ է կրում, օրինակ՝ «անհատ ուսանողի պատմություններ»: Հետևաբար, թեմաներից մեկը, որին արձագանքել է MoVE-iT ուսումնասիրությունը, ՆՄԿՈՒ վերազգային շարժունության առավելությունների հիմնախնդիրն է:

Շարժունության առավելությունները

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության առավելությունները գործատուների տեսանկյունից

Շատ քիչ բան է հայտնի այն առավելությունների մասին, որոնք ունենում են գործատուները ՆՄԿՈՒ վերազգային ստաժավորմանը մասնակցելիս: Այս հատվածում հետազոտությունը թերի է: Եթե հարցում կատարվի, ապա պարզ կդառնա, որ գործատուները հակված են սահմանել վերազգային ստաժավորման առավելությունները գլխավորապես որպես ՆՄԿՈՒ անհատ մասնակիցների «անձնական օգուտ»: Նույնիսկ այն ձեռնարկությունները, որոնք ՆՄԿՈՒ մասնակիցներին ուղարկում են վերազգային ստաժավորման, չեն տեսնում իրենց անմիջական օգուտը և նրանցից շատ քչերն են տեսնում տնտեսական շահույթներ՝ որպես վերազգային ստաժավորման ծրագրերին մասնակցության հավանական արդյունք:

Կարողությունների զարգացում և միջազգայնացում

Գործատուներին ՆՄԿՈՒ վերազգային ստաժավորումը կարող է ծառայել որպես ապագա գործառուների հմտությունների ու կարողությունների զարգացման և միջազգայնությունը խթանելու գործիք: Վերազգային ստաժավորումը կարող է օգնել զարգացնել ապագա գործառուների /միջազգային/ հմտություններն ու կարողությունները, որոնք էական գործոն են միջազգային շուկայում լավ գործելու և Եվրոպայում տնտեսական զարգացման համար: Այդ հմտություններն են /մնացյալի շարքում/՝ սովորել սովորելու համար, տեղեկատվության մշակում, որոշում կայացնելու հմտություններ, հաղորդակցման և օտար լեզվի հմտություններ, ստեղծագործական մտքեր, խնդիր լուծելու հմտություններ, ինքնակառավարում, ինքնակատարելագործում և ճկունություն:

Մասնավորապես, ՓՄՁ-ները քիչ են մասնակցում ՆՄԿՈՒ մասնակիցների վերազգային ստաժավորմանը, մինչդեռ առաջինները կազմում են ՆՄԿՈՒ շրջանավարտների զբաղվածության հիմնական «հատվածը»: Բացի այդ, ՓՄՁ-ները միջազգային մասշտաբով ներկայումս շատ քիչ են աշխատում, չնայած կան տարբերություններ ոլորտների միջև: Ակնկալվում է, որ ՓՄՁ-ների շրջանում միջազգայնացումը կմեծանա: Հետևաբար, կարևոր է ՓՄՁ-ներին տեղեկացնել, որ աշկերտին կամ ՆՄԿՈՒ մասնակցին վերազգային ստաժավորման ուղարկելը կամ ընդունելը շահութաբեր ներդրում է:

Առանձնահատուկ առավելություններ ձեռնարկությունների համար

Գործատուների համար վերազգային ստաժավորման առավելությունները կապված չեն միայն հետագա գործառուների կարողության զարգացման հետ, ինչպես ընդունված է կարծել /գործատուների կողմից/: Գործատուների համար այլ առավելություններն են.

- բազմամշակութային արժեքավոր փորձեր և հետագայում միջազգայնացող աշխատուժ,
- ընկերության հետ միջազգային շփման եզրերի ձեռքբերում,
- նոր շուկաների նոր խթաններ, գաղափարներ և գիտելիք,

- ուսանողների՝ նոր մոտեցումներ և նոր /աշխատանքային/ մեթոդներ ներմուծելու հնարավորություն,
- անձնակազմի լեզվի կատարելագործված ձեռքբերում,
- մշակութային խորը իրազեկվածություն և տեխնիկական ըմբռնում,
- տվյալ ոլորտի ընդհանուր պատկերի և գրավչության կատարելագործում:

Հնարավոր առավելությունները կարող են վերաբերել նաև որոշակի ոլորտներում կամ տարածաշրջաններում հմտության պակասորդներին արձագանքելուն և /նոր/ տեխնոլոգիաների ու փորձառության փոխանցմանը:

Առավելությունների որոշարկում

Ինչպես նշվել է, կարևոր հիմնախնդիր է դեռևս համարվում ՆՄԿՈՒ վերազգային ստաժավորման առավելությունների ուսումնասիրումը, որոշարկումը և հաղորդումը: Որպեսզի խթանենք ձեռնարկություններին հյուրընկալել միջազգային աշկերտների և ուսուցանվողների, անհրաժեշտ է հստակեցնել, թե իրականում ինչ շահույթներ են հետապնդում ձեռնարկությունները: Կարևոր է նաև իմանալ, թե ինչպես են շարժունության մեջ չներգրավված ձեռնարկություններն ընկալում վերազգային ստաժավորման /հնարավոր/ շահույթները:

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության առավելությունները ՄԿՈՒ հաստատությունների տեսանկյունից

ՆՄԿՈՒ գրավչություն

Վերազգային շարժունությունը կարող է նպաստել ընդհանուր առմամբ ՆՄԿՈՒ գրավչության կատարելագործմանն ու հատկապես աշկերտության համակարգին և՛ ՄԿՈՒ համակարգի, և՛ ՄԿՈՒ հաստատությունների մակարդակում: Վերազգային ստաժավորման հնարավորության առաջարկը կարող է ընդլայնել ՄԿՈՒ հաստատությունների և հատուկ ծրագրերի ընդհանուր պատկերը՝ դրանք դարձնելով ավելի գրավիչ: Բացի այդ, վերազգային ստաժավորման հնարավորության ապահովումն ավելի ընդգրկուն է դարձնում ՄԿՈՒ ծրագրերը:

Հաստատության մեջ միջազգային միջավայր

Ուսանողներին և աշկերտներին արտասահմանից հյուրընկալելը, ինչպես նաև արտասահմանից վերադարձող սեփական ուսանողների ու աշկերտների ներկայությունը ստեղծում է միջազգային միջավայր, որից կարող է շահել ամբողջ հաստատությունը: Մասնակցությունը վերազգային շարժունության ծրագրերին տալիս է օտարերկրյա փորձառությունից և փորձից օգտվելու հնարավորություն: Այն նաև ընձեռում է եվրոպական այլ երկրների գործընկերների հետ գաղափարների ու փորձերի փոխանակման հնարավորություններ:

Ուսուցիչների և դասընթացավարների կարողության զարգացում

Հյուրընկալող ընկերություններում ուսուցիչների և դասընթացավարների, ինչպես նաև դասուսույցների /մենթոր/ շարժունությունն իրենից ներկայացնում է մարտահրավեր՝ զարգացնելու և՛ լեզվաբանական, և՛ միջմշակութային /դասավանդման/ հմտությունները: Այսպիսի փորձերի փոխհատուցումը կարող է լինել երկակի:

- ընդլայնված ներգրավում՝ ՆՄԿՈՒ մասնակիցներին վերազգային ստաժավորման գնալու նախապատրաստում և խթանում,
- ինքնուրույն շարժուն դառնալու հնարավորություն՝ օգտագործելով, օրինակ, արտասահմանում կացության համար Լեոնարդո դա Վինչի ծրագրի հնարավորությունները:

Այսպիսի «ներգործությունները» կարևոր են, քանի դեռ ուսուցիչներն ու դասընթացավարներն ունեն առանցքային դերակատարություն ՆՄԿՈՒ մասնակիցների վերազգային շարժունության մեծացման գործում:

Գնահատում

Այլ երկրների ուսանողների և աշկերտների հետ շփման կամ իրենց սեփական ուսանողներին ու աշկերտներին արտասահմանյան ընկերություններ ստաժավորման ուղարկելու միջոցով ՄԿՈՒ հաստատություններն ունենում են հնարավորություն՝ համեմատելու և համապատասխանեցնելու իրենց դասավանդման և ուսումնառության կատարողականությունն այլ երկրների կատարողականությունների ու ակնկալիքների հետ: Սա կարող է նպաստել իրենց սեփական ուսանողների անձնական և մասնագիտական հմտությունների, ինչպես նաև կատարողականության զարգացմանը: Այն կարող է նաև մանակավարժական նորարարության աղբյուր հանդիսանալ:

Միջազգայնացման վաղօրոք մշակվող ռազմավարություններ և քաղաքականություններ

ՄԿՈՒ շատ հաստատություններ գործընկերություն են հաստատում արտասահմանում գտնվող համանման հաստատությունների հետ, որպեսզի իրականացնեն շարժունության ծրագրեր: Եթե նախնական փորձերը հաջողվում են, համագործակցությունը հաճախ շարունակական բնույթ է կրում: ՄԿՈՒ հաստատությունների համար սա միջազգայնացման գործընթացին ուղղված առաջին քայլն է լինում, որտեղ կառավարումը կախվածություն է ձեռք բերում միջազգային համագործակցության կարևորությունից, ինչն իր հերթին յուրաքանչյուր հաստատության համար միջազգայնացման համապարփակ քաղաքականությունների և ռազմավարությունների մշակմանն ուղղված առաջին քայլն է:

ՄԿՈՒ հաստատությունները՝ որպես «գիտելիքի կենտրոններ»

Միջազգայնացումը կամ գլոբալիզացիան իրական են գործարարության և արդյունաբերության համար: Սա պետք է իր արտահայտությունը գտնի ՄԿՈՒ հաստատությունների քաղաքականություններում և ծրագրերում: Դրանք պետք է վերափոխվեն «ավանդական դպրոցներից» «գիտելիքի կենտրոնների», որոնք անմիջական կապ են հաստատում այն ձեռնարկությունների հետ, որոնք կարող են տրամադրել ուսուցման համապատասխան ուղիներ և մասնակցել զարգացման գործողություններին: Մասնակցությունը վերազգային շարժունության ծրագրերին այս գործընթացի մի մասն է: Այն օգնում է ՄԿՈՒ հաստատություններին սովորել հարմարեցնել ուսումնական ծրագիրը գլոբալ աշխատաշուկայի պահանջներին՝ մեծացնելով հաստատության թափանցիկությունն իր մասնագիտական միջավայրի, ինչպես նաև միջազգային աշխատաշուկայի համար:

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության առավելությունները ՆՄԿՈՒ մասնակիցների տեսանկյունից

Եռակի կարողության զարգացում

Վերազգային շարժունություն ձեռք բերելը նախևառաջ և մեծամասամբ կախված է ՆՄԿՈՒ անհատ մասնակիցների կողմից եվրոպական քաղաքացիության և նրանց մասնագիտական, միջազգային ու անձնական հմտությունների ձեռքբերումից: Իսկ ավելի ճշգրիտ, դա վերաբերում է մասնագիտական որոշարկված հմտություններին, միջազգային և անձնական հմտություններին ու կարողություններին:

Առավելությունները՝ ըստ ՆՄԿՈՒ մասնակիցների

ՆՄԿՈՒ մասնակիցներն իրենք, ովքեր մասնակցել են միջազգային ստաժավորմանը, նշում են հետևյալ առավելությունները.

- Մշակութային կատարելագործված իրազեկվածություն,
- Լեզվի կատարելագործված ընդունակություն,
- Մեծ ինքնավստահություն,
- Կրկին գնալու ցանկություն,
- Եվրոպայի այլ երկրների մասին պատկերացում,
- Հաղորդակցման կատարելագործված հմտություններ,
- Աշխատանքային հարաբերություններ,
- Անձնական հարաբերություններ,
- Ուսումնասիրությունն ավարտելու ավելի շատ տրամադրվածություն,
- Ավելի մեծ հետաքրքրվածություն այլ անձանց նկատմամբ,
- Ակնկալվող դրական ներգործություն կարիերայի հնարավորությունների վրա,
- Մասնագիտական կատարելագործված գիտելիք:

Գործընթացի խնդիրն այն է, թե արդյո՞ք ներգրավված բոլոր կողմերն են սկզբունքորեն շահում վերազգային շարժունությունից, և ինչու՞ ՆՄԿՈՒ երիտասարդների մասնակցությունը վերազգային շարժունությանը զգալիորեն չի աճում: Որո՞նք են վերազգային ստաժավորման գնալու և ՆՄԿՈՒ մասնակիցներին այսպիսի ստաժավորման ուղարկելու կամ ընդունելու խոչընդոտները:

Շարժունության խոչընդոտներ

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության խոչընդոտները գործատուների տեսանկյունից

Տեղեկացվածություն

Տեղեկացվածությունն այն հիմնական խոչընդոտն է, որը խանգարում է ձեռնարկություններին մասնակցել ՆՄԿՈՒ վերազգային շարժունությանը: Տեղեկացվածություն ասելով՝ ի նկատի ունենք՝

- տեղեկացված լինել վերազգային ստաժավորման, մասնավորապես այդպիսի ստաժավորումը ֆինանսավորելու տարբեր հնարավորությունների մասին,
- պատկերացում վերազգային ստաժավորման /հնարավոր/ առավելությունների մասին և՛ ՆՄԿՈՒ ներգրավված մասնակիցների և՛, որ ամենակարևորն է, հենց իր՝ ձեռնարկության համար:

Վերազգային ստաժավորման /ֆինանսավորման/ այնպիսի հնարավորությունների մասին տեղեկատվությունը, ինչպիսին Լեոնարդո դա Վինչի ծրագիրն է, էական է. այն կարող է օգնել կրճատել ծախսերը և հաղթահարել դրանց առնչվող խոչընդոտները: Համապատասխան և հակիրճ տեղեկություն է անհրաժեշտ՝ խթանելու ձեռնարկություններին կատարել առաջին քայլերը և սկսել մասնակցել վերազգային շարժունությանը:

«Տեղեկացվածության» երկրորդ տեսակն ավելի կարևոր է: Շատ ձեռնարկություններ դեռևս կարծում են, որ միջազգային փոխանակումները բացառապես շահեկան են մասնակիցների անձնական, սոցիալական, միջազգային և մասնագիտական հմտությունների համար: Հետևաբար, նրանք տրամադրված չեն մասնակիցներին ուղարկել /երկկողմ/ փոխանակման ծրագրերի: Ձեռնարկություններն ընկալում են իրենց աշկերտների կամ դասընթացավարների մասնակցությունը վերազգային փոխանակումներին որպես «արձակուրդ», որի համար նրանք ոչ մի հարկ չեն տեսնում: Առավելությունները հենց իրենց՝ ձեռնարկությունների համար հստակ չեն. վերջիններս նույնիսկ կարծում են, որ դրանք գոյություն չունեն: Միևնույն ժամանակ պարզ է, որ այն աստիճանը, որով ձեռնարկությունները ցանկություն ունեն ուղարկել ՆՄԿՈՒ մասնակիցներին վերազգային ստաժավորման, կապված է միջազգային շուկայում նրանց աշխատելու և գործելու աստիճանի հետ: Սա անշուշտ վերաբերում է ՓՄՁ-ներին: Այնուամենայնիվ, նույնիսկ ավելի շատ կամ քիչ միջազգայնացված ոլորտներում /ինչպիսին է քիմիական արդյունաբերությունը/ ՆՄԿՈՒ մասնակիցների միջազգային

ստաժավորումը կարող է դեռևս բախվել արգելապատերի այն առումով, որ այդպիսի ստաժավորումն այս մակարդակում չի համարվում համապատասխան աշկերտների և դասընթացավարների համար, մինչդեռ շարժունությունը, մասնավորապես լայնածավալ /մասնագիտական և անձնական/ հմտությունների կատարելագործումը, չի դիտարկվում որպես այդ գործառուների կարիերայի զարգացման մի մաս:

Ծախսեր

Եթե ձեռնարկություններն ուղարկում են ՆՄԿՈՒ մասնակցին վերազգային ստաժավորման, ապա դա հաճախ վերաբերում է այն աշկերտին, որը հիմնականում ոչ միայն ուսուցանվում, այլ նաև աշխատում է տվյալ ձեռնարկությունում: ՆՄԿՈՒ մասնակիցներին վերազգային ստաժավորման ուղարկելու համար պահանջվող ծախսերն էական խոչընդոտ են հանդիսանում այդ ձեռնարկությունների համար: Ծախսերը վերաբերում են՝

- հավելյալ անձնակազմի վարձում այն ընթացքում, երբ աշկերտները բացակայում են,
- արտասահմանում աշկերտների կացության ընթացքում նրանց աշխատավարձերը վճարելու համար գործատուների պայմանագրային պարտավորվածություն /տարբեր երկրներում սա լինում է տարբեր/:

Սակայն վերազգային ստաժավորման համար ՆՄԿՈՒ մասնակիցներ ընդունող բոլոր ձեռնարկությունները բախվում են ծախսերի հետ: Սա վերաբերում է ՆՄԿՈՒ մասնակիցների վերահսկման ծախսերին, ովքեր իրենց ստաժավորման գործընթացն անցկացնում են տվյալ ձեռնարկությունում:

Այլ խոչընդոտներ

Կառուցվածքային որոշումները և վարչական ընթացակարգերը ոչ միայն օրինակ Լեոնարդո դա Վինչի ծրագրում, այլ նաև ազգային որոշ ծրագրերում խրթին են դարձրել, մասնավորապես ՓՄՁ-ների համար, այսպիսի ծրագրային գործընթացներին ուղղակի մասնակցություն ցուցաբերելը: Քաշքշուկը սովորաբար մեծ է լինում ֆինանսավորման համար օգնության դիմելիս, իսկ անհատական ֆինանսավորման դիմելն անհնար է: Եթե դիմումները վերաբերում են մոտ 10 հոգանոց խմբին, ապա դա զրկում է ՓՄՁ-ներին ուղղակի մասնակցությունից: Նրանք պետք է հույսը դնեն միջնորդ այնպիսի կազմակերպությունների վրա, ինչպիսիք են մասնագիտական դպրոցները, փոխանակման կազմակերպությունները և առևտրաարդյունաբերական պալատները: Սա նաև նշանակում է, որ ՓՄՁ-ներն ունեն քիչ վերահսկողություն այնպիսի հիմնախնդիրների վրա, ինչպիսիք են թիրախային երկիրը, կացության սկիզբն ու տևողությունը:

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության խոչընդոտները ՄԿՈՒ հաստատությունների տեսանկյունից

Ինստիտուցիոնալ խոչընդոտներ

Հենց իրենց՝ ՄԿՈՒ հաստատությունների մակարդակում, վերազգային շարժունության էական խոչընդոտներ կան: Դրանք վերաբերում են՝

- վերազգային շարժունության առումով ռազմավարությունների կամ քաղաքականությունների բացակայություն /շարժունությունը համարվում է նեղ մասնագիտական գործողություն, որը հաճախ կախված է անձնակազմի անդամներից մեկի կամ մի քանիսի ներգրավումից և խանդավառությունից/,
- /ՄԿՈՒ հաստատություններում/ միջազգային ծրագրեր իրականացնելու կարողության բացակայություն /փորձի, ժամանակի սղություն, անձնակազմի կարողության զարգացման պակաս/,
- վերազգային շարժունության մասին գիտելիքի և փորձի փոխանակման ցանցերի բացակայություն /սա վերաբերում է նաև առկա փորձին ու ժամանակին, որը կարող է մեծանալ վերազգային շարժունության համար կառավարման օժանդակության բացակայությունից/,
- վերազգային ստաժավորման հետ կապված դժվարություններ օժանդակող, ուղղորդող և խորհրդատու /փորձառու/ անձնակազմ գտնելիս /և՛ ներգնա, և՛ արտագնա ՆՄԿՈՒ մասնակիցներ/:

Ֆինանսավորում

Մեկ այլ կարևոր խոչընդոտ է ֆինանսավորումը: ՄԿՈՒ հաստատությունները նշում են, որ ֆինանսական առկա ռեսուրսներն անբավարար են ՝ ֆինանսավորելու ՆՄԿՈՒ այն մասնակիցներին, ովքեր արտասահման գնալու ցանկություն ունեն, ինչպես նաև կա ֆինանսական միջոցների բացակայություն՝ ծածկելու ինստիտուցիոնալ սեփական ծախսերը վերազգային փոխանակման ծրագրերին մասնակցելու համար:
Խոչընդոտ է համարվում նաև արտասահմանում որակյալ ստաժավորման բացակայությունը:

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության խոչընդոտները ՆՄԿՈՒ մասնակիցների տեսանկյունից

Վերազգային ստաժավորման գնացող ՆՄԿՈՒ մասնակիցները կարող են հանդիպել խոչընդոտների ստաժավորման տարբեր փուլերում՝ նախքան գնալը, արտասահմանում կացության ընթացքում և նույնիսկ կացությունից հետո:

Նախքան արտասահման գնալը

- Տեղեկատվության ապահովումը կարող է խոչընդոտ հանդիսանալ: ՆՄԿՈՒ մասնակիցները դժգոհություն են հայտնում տեղեկության պակասից թե՛ շարժունության հնարավորությունների, թե՛ ստաժավորումից նրանց ստացած շահույթների առումով: Սա կարևոր հիմնախնդիր է, որը պետք ի նկատի ունենան ՄԿՈՒ իրականացնողները /այն չի սահմանափակվում ՄԿՈՒ հաստատությունների համար/: Նրանք պետք է նաև հաշվի առնեն թիրախային տարբեր խմբերին: Վերազգային ստաժավորումը գրավում է այն երիտասարդներին, ովքեր արդեն ունեն դրական տրամադրվածություն վերազգային ստաժավորման հանդեպ: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն մարդկանց, ովքեր չեն ուզում «անձնական» սահմանափակումների պատճառով /ընտանիքից կամ ընտանեկան պարտականություններից, ընկերներից կտրվելը կամ անձնական այլ հանգամանքներ, օրինակ՝ աշխատանքներ/ գնալ արտասահման:
- Վերազգային շարժունության խթանումը չի հնչում որպես խոչընդոտ: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ որոշ մասնակիցներ, հատկապես նրանք, ովքեր ուզում էին գնալ արտասահման, բայց չգնացին, նշեցին արտասահման գնալու դրական խթանիչների բացակայության մասին: Դրա պատճառ կարող է հանդիսանալ ՄԿՈՒ իրականացնողների կողմից շարժունության հստակ քաղաքականության բացակայությունը, ինչպես նաև այլ /անձնական/ հանգամանքներ:
- Չնայած ՆՄԿՈՒ մասնակիցները հստակ չնշեցին, բայց վերազգային ստաժավորմանը լավ պատրաստված լինելը հաջող ստաժավորման էական մասն է կազմում ուսումնառության արդյունքների, ինչպես նաև ՆՄԿՈՒ մասնակիցների դրական փորձի առումով: Լավ պատրաստվածությունը կարող է օգնել՝ խուսափելու հուսախաբությունից, որն առաջանում է անիրատեսական ակնկալիքներից: Սակայն լավ պատրաստվածությունը վերաբերում է նաև ինչպես ֆինանսական միջոցների սղության, այնպես էլ լեզվի /և մշակութային/ հմտությունների պակասորդների հետ կապված խնդիրների լուծմանը կամ դրանց նվազեցմանը:

Արտասահմանում կացության ընթացքում

- /նվիրյալ/ դասուսույցի կամ դասընթացավարի առկայությունն էական է: Նախընտրելի է, որ վերազգային ստաժավորման գնացող ՆՄԿՈՒ մասնակիցները շաբաթական առնվազն մեկ անգամ շփում ունենան հյուրընկալող ընկերության դասընթացավարի հետ, ով ոչ միայն կենտրոնանում է գործնական խնդիրների և խոչընդոտների, այլ նաև, որպես այդպիսին, ուսումնառության գործընթացի, ինչպես նաև աշկերտի/սովորողի և հյուրընկալող ընկերության համապատասխանության վրա:
- Ստաժավորման որակը համարվում է կարևոր և աստիճանաբար ավելի է կարևորվում: ՆՄԿՈՒ մասնակիցներն ակնկալում են, որ արտասահմանում կացության ժամանակ հյուրընկալող կազմակերպությունը տեղյակ լինի նրանց ընդհանուր իրավիճակի և նպատակների մասին, իսկ ուղարկող հաստատությունները՝ նրանց ունեցած փորձի

մասին: Մասնակիցները ցանկանում են զարգացնել ոչ միայն անձնական և միջազգային, այլ նաև մասնագիտական հմտությունները:

Արտասահմանում կացությունից հետո

ՆՄԿՈՒ մասնակիցներն էական են համարում վերադառնալուն պես իրենց փորձը գործի դնելը և ակնկալում են, որ իրենց ՄԿՈՒ հաստատություններն օգտագործեն և արտասահմանում ձեռք բերված փորձի վերաբերյալ իրենց գնահատականը տան: Սակայն միջազգային ստաժավորումից վերադառնալը չի արժանացել մեծ ուշադրության մինչ այժմ: Արտասահմանում ստացած ստաժավորումից պայմաններ ապահովող ուսումնառության ձեռքբերումների տեսանկյունից /անկախ նրանից, թե դա վերաբերում է մասնագիտական, միջազգային, թե անձնական հմտություններ ձեռք բերելուն/ կարևոր է մասնակիցներին ապահովել արտահայտվելու հնարավորություններ՝ քննարկելու իրենց փորձը, որպեսզի նրանց հնարավորություն տրվի ընդգրկել ուսումնառության այս փորձերն իրենց ուսումնառության կենսագրության մեջ իմաստալից եղանակով և օգնել նրանց արտահայտել վերազգային իրենց փորձին ավելացրած արժեքը:

ՆՄԿՈՒ վերազգային շարժունության խոչընդոտները եվրոպական և ազգային /քաղաքականության/ մակարդակի տեսանկյունից

Եվրոպական և ազգային /քաղաքականության/ տեսակետից առանձնահատուկ խոչընդոտները վերաբերում են.

- «Քաշքշուկներ» դիմումների և եվրոպական կամ ազգային ծրագրերի ներկայացման հետ առնչվելիս, որոնց նպատակն է խթանել ՆՄԿՈՒ վերազգային շարժունությունը: Ընթացակարգերը չափազանց բյուրոկրատական են և ժամանակատար: Այս դժգոհությունը եկել է և՛ ՄԿՈՒ հաստատությունների, և՛ ձեռնարկությունների, մասնավորապես ՓՄՁ-ների կողմից: Այս քննադատությունն ինչ-որ չափով վերաբերում է նաև եվրոպական այլ ծրագրերին, որոնք ֆինանսավորում են ՆՄԿՈՒ մասնակիցների վերազգային շարժունությունը, ինչպես նաև ազգային ծրագրերը:
- Ազգային քաղաքականությունների պակաս ՆՄԿՈՒ շարժունության առումով: Որոշ երկրներում մինչ այժմ այսպիսի քաղաքականություններ չկան /բացի մասնակցությունից եվրոպական այնպիսի ծրագրերին, ինչպիսին է Լեոնարդո դա Վինչին/, մինչդեռ այլ ծրագրերում վերջին տարիների ընթացքում ՆՄԿՈՒ վերազգային շարժունության քաղաքականության վրա հրավիրվող ուշադրության աղոտացումը /այն ժամանակահատվածից հետո, երբ դա արժանացել էր քաղաքականության որոշակի ուշադրության/ դիտարկվում է որպես խնդրահարույց:
- Ելնելով շատ երկրների ՆՄԿՈՒ բարդ կառուցվածքից և ՆՄԿՈՒ ֆինանսավորումից՝ վերազգային շարժունության առումով քաղաքականություններ և ծրագրեր մշակելու գործում նախարարությունների միջև համագործակցության պակասը ՆՄԿՈՒ-ում նույնպես համարվում է խնդրահարույց:

Խոչընդոտներ և առաջարկներ

Խոչընդոտներից դեպի առաջարկներ

Սկզբնապես, աղբյուրների մեծ քանակություն է քննարկվել, և մոտ 400 խոչընդոտների երկար մի ցանկ է մշակվել: Ծրագրի հետագա փուլերի միջոցով, մասնավորապես այն փուլերի, որտեղ տվյալները հավաքագրվում և վերլուծվում էին տարբեր աղբյուրներից, այս «երկար» ցանկը կրճատվեց ՆՄԿՈՒ շարժունության ամենահամապատասխան և ճնշող խոչընդոտների «գլխավոր տասնյակի»: Գլխավոր տասնյակն է /ոչ ըստ գերակայության հաջորդականության/՝

- Որակյալ ստաժավորման պակաս,
- Շարժունության շահեկանության վերաբերյալ գիտելիքի պակաս,
- Ստաժավորման գործընթացներում ուսումնառության մանկավարժական փորձառության պակաս,
- Միջազգայնացման տևական ռազմավարությունների պակաս,
- Շարժունության վերաբերյալ հետազոտության պակաս,
- Ստաժավորման կազմակերպիչների փորձի ընդհանրության պակաս,
- Իրավական և վարչական արգելքներ,
- Երիտասարդների շահագրգռվածության պակաս,
- Լեզվաբանական և մշակութային հիմնային գիտելիքի պակաս,
- Ճանաչման պակաս:

Չնայած վերջին խոչընդոտն իսկապես խիստ կարևոր է, սակայն մենք չենք մշակել որևէ առաջարկ այս խնդրի լուծման ուղղությամբ, քանի դեռ «ճանաչումը» երկու այլ ծրագրերի՝ ՄԿՈՒԵԿ Ռեֆլեկտոր և ՄԿՈՒԵԿ Կապ, կենտրոնացման առանցքային կիզակետն էր: Քանի որ որոշ խոչընդոտների միջև կա որոշակի համընկնում, դրանք խմբավորվել են խոչընդոտների հինգ խմբերի, որոնց մեղմացման համար մշակվել են առաջարկներ: Ներքոհիշյալ աղյուսակը տալիս է ՆՄԿՈՒ վերազգային շարժունության խոչընդոտների 5 խմբերի ընդհանուր համապարփակ պատկերը և այն առաջարկները, որոնք ձևավորվել են՝ հաղթահարելու այս խոչընդոտներից յուրաքանչյուրը: Առաջարկները մանրամասն կներկայացվեն ստորև:

Որակ

ԵՄ-ում վերազգային ստաժավորման որակի չափաբերումն ու մշտադիտարկումը նուրբ, սակայն, միևնույն ժամանակ, բարդ հիմնախնդիր է: ԵՄ և ԵԱԱՀ երկրներում ՆՄԿՈՒ համակարգերը խիստ տարբեր են: Սա բավականին դժվարեցնում է որակի ընդհանուր չափանիշների հաստատումը: Բացի այդ, ՆՄԿՈՒ համակարգերը զարգացել են ազգային համատեքստերում երկար տարիների ընթացքում: ՆՄԿՈՒ համակարգերի այս զարգացումը և որակի ընդահանուր չափանիշների հաստաստման համար արգելքները ևս պետք է ի նկատի ունենալ: Երբ խոսում ենք վերազգային շարժունության, հատկապես ստաժավորման որակի մասին, պետք է հաշվի առնել որակին առնչվող երեք կողմերը՝

- տեղեկացվածություն որակի մասին /դերակատարներին և շահագրգիռ կողմերին տեղյակ պահել «որակի» կամ դրա պակասի մասին/,
- որակի սահմանում /նկարագրել, թե ինչ է դա, հաստատել որակի չափանիշներ/,
- որակի ապահովում /որակի խթանում գործնական մակարդակում՝ կիրառելով որակի չափանիշների գործող տարբերակներն անհատական ծրագրերում/:

Հետևյալ երաշխավորությունները նպատակուղղված են՝ լուծելու այս հիմնախնդիրները:

Խոչընդոտներ և Առաջարկներ	
Որակ	1. Որակի ընդհանուր չափանիշները վերափոխել որակի ապահովման հատուկ ռազմավարությունների 2. Երաշխավորել, որ շարժունության որակը մշտադիտարկվում և ճանաչվում է 3. Արձագանքել շարժունության ծրագրերի գիտելիքի պակասին՝ ձևավորելով լավագույն փորձի տվյալների լիարժեք բազա
Օժանդակող մեխանիզմ	4. Մատչելի դարձնել ֆինանսավորումն անհատ երիտասարդների համար 5. Ստեղծել կոլեկտիվ ծառայության կենտրոններ ստաժավորում կազմակերպողների և ՓՄՁ-ների համար 6. Օգտագործել ցանցային նորարարություններ՝ համապատասխանեցնելու պահանջարկն ու առաջարկը 7. Օժանդակել և ստեղծել փորձի ընդհանրություն
Տևական ռազմավարություններ	8. Մշակել ռազմավարական շրջանակներ և ֆինանսավորումը դարձնել կախյալ՝ գործողության պլանից 9. Միմյանց կապել և խանդավառել գլխավոր որոշում ընդունողներին՝ մեծացնելու կապիտալը
Տեղեկացվածություն	10. Մշակել հրապարակայնության քարոզարշավ և օգտագործել զանգվածային լրատվամիջոցներ՝ հաղորդակից դարձնելու թիրախային խմբերին 11. Կիրառել զանգվածային լրատվամիջոցների առկա ուղիները
Իրավական և վարչական արգելքներ	12. Նկատի ունենալ աշկերտների իրավական կարգավիճակը 13. Աշխատավայրում առողջապահությանը, անվտանգությանն ու պատասխանատվության ապահովագրությանն առնչվող միջոցների մշակում 14. Կատարելագործել մուտքի հնարավորությունն առկա տեղեկատվություն

Երաշխավորություն 1. Որակի ընդհանուր չափանիշները վերափոխել որակի ապահովման հատուկ ռազմավարությունների

Որակի ապահովման ձեռնարկի մշակում /համաձայն արդեն առկա վարչական և ֆինանսական ձեռնարկի/, որն առաջարկում է որոշարկված խորհուրդներ և օրինակներ, որոնց կարելի է ընդօրինակել կամ տեղայնացնել ծրագրերում կիրառելու համար: Ձեռնարկը պետք է հասանելի լինի նաև առցանց եղանակով՝ թույլ տալու տևական տեղայնացում և տարածում:

Երաշխավորություն 2. Երաշխավորել, որ շարժունության որակը մշտադիտարկում և ճանաչվում է

ՆՄԿՈՒ մասնակիցներին վերազգային ստաժավորման ուղարկելը կամ ընդունելն առաջին հերթին ծրագրի գործընկերների միջև փոխվստահության խնդիր է: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ մասնակիցները, ովքեր անցել են վերազգային ստաժավորում, ցանկանում են «դրսևորել» իրենց փորձն աշխատաշուկայում: Սա պահանջում է թափանցիկություն վերազգային ստաժավորման որակի /մակարդակների/ առումով, որին կարելի է հասնել՝ տալով «որակի դրոշմ» օրինակ՝ ՄԿՈՒԵԿ-ի համատեքստում: Շատ երկրներում գործնական ուսուցման/աշխատանքի ստաժավորման այդպիսի «որակի դրոշմներ» արդեն գոյություն ունեն: Ուստի, առաջին քայլն ազգային «որակի դրոշմների» նմանությունների/տարբերությունների վերաբերյալ տեղեկատվության պատշաճ փոխանակում երաշխավորելն է:

Երաշխավորություն 3. Արձագանքել շարժունության ծրագրերի գիտելիքի պակասին՝ ձևավորելով լավագույն փորձի տվյալների լիարժեք բազա

Որակի ապահովման լայն ըմբռնումը պահանջում է մեծ իրազեկվածություն: Գիտելիքի այս բացթողումներին արձագանքելու համար պետք է աշխատանքի վերցնել փորձառու համապատասխան հետազոտողների՝ հետևելու հատուկ ծրագրերի զարգացմանը, որոնք կենտրոնանում են որակի ապահովման ավելի մեծ տեղեկատվություն պահանջող հատվածների վրա:

Օժանդակող մեխանիզմներ

Ռազմավարությունը կարող է լինել հզոր և համոզիչ, սակայն առանց հաջող իրագործման այն կարող է հետաքրքիր մնալ միայն տեսական մակարդակում: Մենք մշակել ենք մի շարք երաշխավորություններ, որոնց նպատակն է արձագանքել գործող մարտահրավերներին:

Երաշխավորություն 4. Մատչելի դարձնել ֆինանսավորումն անհատ երիտասարդների համար

Լեոնարդո դա Վինչին թույլ չի տալիս անմիջական դիմումներ անհատ երիտասարդներից: Չնայած միայն խմբի հիման վրա ֆինանսավորման համար կան լուրջ պատճառներ

/գլխավորապես մասնակիցների հավանական տարիքը/, սակայն առկա սկզբունքները զրկում են շատ երիտասարդներին այլ երկրում աշխատանքային ստաժավորման շնորհիվ հմտություններ, գիտելիք և փորձ ձեռք բերելու հնավորությունից: Կառաջարկեինք առկա ֆինանսավորման համամասնությունը դարձնել մատչելի անհատների համար: Դրամաշնորհների փաթեթ պետք է ստեղծվի՝ հաստատելու խաչաձև սահմանային մասնագիտական գործընկերություններ, որոնք կարող են պայմանագիր կնքել անհատ մասնակիցների հետ:

Երաշխավորություն 5. Ստեղծել կոլեկտիվ ծառայության կենտրոններ ստաժավորում կազմակերպողների և ՓՄՁ-ների համար

Բազմազգային մեծ ընկերություններն ունեն գործող ընդգրկուն համակարգեր՝ իրականացնելու իրենց սեփական շարժունության գործընթացները: Փոքր գործարարությունները չեն տիրապետում օժանդակման, ժամանակի և ռեսուրսների միևնույն մակարդակին՝ իրականացնելու նման համակարգերի գործառույթներ: Սակայն ՓՄՁ-ներն ունեն կենսական դերակատարություն մասնագիտական կրթության և ուսուցման համար շարժունության հնարավորություններ ստեղծելու գործում, քանի որ ՓՄՁ-ները թվով ավելի շատ աշկերտների են աշխատանքի ընդունում, քան մեծ ընկերությունները, և դրանք շահում են իրենց ռեսուրսների բազան ընդլայնելուց ու շարժունության հիմնախնդիրների մասին ճիշտ պատկերացում ունենալուց:

Որպեսզի նրանց օգնենք հասնել դրան, առաջարկում ենք շարժունության գործընթացների համար ստեղծել կոլեկտիվ ծառայության կենտրոններ, որոնք կօգնեն տարածել տեղեկատվությունը և ստեղծել օժանդակող մեխանիզմներ հնարավոր մասնակիցներին, ուսումնական հաստատություններին և ընկերություններին միմյանց փոխկապակցելու համար: Սա կարող է նաև ապահովել տեղեկատվություն գործնական, իրավական և վարչական հիմնախնդիրների վերաբերյալ, որը պետք է ի նկատի ունենալ մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը շարժունության հնարավորություններ ապահովելիս: Եվ վերջապես, կոլեկտիվ ծառայության այսպիսի կենտրոնը կարող է սատարել ընկերություններին ստաժավորման ծրագրեր իրականացնելիս:

Երաշխավորություն 6. Օգտագործել ցանցային նորարարություն՝ տարածելու տեղեկատվությունը և համապատասխանեցնելու պահանջարկն ու առաջարկը

Մի շարք քայլեր կարելի է ձեռնարկել, որոնք էապես կմեծացնեն վեբ-կայքի առկա տեղեկատվության աղբյուրների օգտակարությունը: Մասնավորապես, կիրառողների սեփական բովանդակությունը ստեղծելու և իրականացնելու հնարավորությունից օգտվելը կարող է մեծացնել ապահովվող տեղեկատվության համապատասխանությունն ու օգտակարությունը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով, որ այն նորացվում է գործածողների համապատասխան խմբերի կողմից:

Վեբը կարող է օգտագործվել՝ համապատասխանեցնելու որոնողներին առկա հնարավորությունների հետ: Կան շատ տարբեր կայքէջեր, որոնք առաջարկում են անմիջական շփումներ գործատուների և ապագա գործառուների միջև: Եթե զբաղվածության հարաբերություններում կա միայն երկու կողմ, մասնագիտական ուսուցման բնույթը ենթադրում է մեկ այլ՝ վերահսկող շերտ, որը կյանքն էլ ավելի է բարդացնում: Հետևաբար, այս համատեքստում համապատասխանեցնող կայքէջերը պետք է մի շարք նկատառումների և փոխազդեցությունների հնարավորություն ունենան:

Այսպիսի գործիքի նախագիծը պետք է արտահայտի տարբեր չափորոշիչներ, օրինակ՝ տեղական և պետական մարմիններից, ինչպես նաև ճյուղային կազմակերպություններից, իսկ հետագայում դրանք պետք է տեղայնացվեն ուսումնական հաստատությունների կողմից՝ որպես իրենց վերահսկման ներքո գտնվող դիմորդներին վերաբերող պահանջների մասին հատուկ քաղաքականություններ /օր.՝ հեռավորությունը տանից, հնարավորության տևողությունը և այլն/: Անհրաժեշտ կլինի նաև ընկերություններին ու ծրագրի կազմակերպիչներին ապահովել համապատասխան տեղեկատվություն և պահպանել անվտանգության բարձր չափանիշները՝ պահպանելու գաղտնիությունը:

Չնայած այս մարտահրավերներին՝ այն մեխանիզմը, որը համապատասխանեցնում էր հնարավորությունների մասին տեղեկատվությունը գործնական ուղղորդմանը՝ օժանդակելու շարժունությանն ուղղված գործողություններին, կվերացնի տեղեկատվության ներկայիս ապահովման էական թերությունները:

Օժանդակել և ստեղծել փորձի ընդհանրություն

Ազգային վարչակազմերում ստեղծել մանկավարժական մի շարք ծրագրեր՝ կյանքի կոչելու ՄԿՈՒ հիմնախնդիրների և շարժունության վերաբերյալ գիտելիքն ու շահագրգռվածությունը: Կազմակերպություններն ու անհատները, որոնք համակարգում են շարժունությունն աշկերտության մեջ, հակված են լինելու միմյանցից մեկուսացված: Ուստի, կազմակերպիչները նրանց ուղղորդելու համար ընդհանուր առմամբ սկսում են փոքր կամ չփոխանակված փորձից ու գիտելիքից, այլ ոչ թե ձգտում են զարգանալ լավագույն փորձի հիման վրա: Պետք է երաշխավորել, որ ՄԿՈՒ հաստատությունների անձնակազմն ունենա փորձված շարժունություն և խրախուսել փորձարկումներին, ինչպես նաև արտասահմանում շարժունությանն ու ստաժավորմանը:

Տևական ռազմավարություններ

Կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք հանգեցնում են տևական ռազմավարությունների բացակայությանը, օրինակ՝ դժվարություններ նպատակների ու խոչընդոտների վերաբերյալ երկարաժամկետ վճռականություն երաշխավորելու մեջ և գլխավոր որոշում ընդունողների շրջանում ըմբռնման պակաս: Հետևյալ երաշխավորությունների նպատակն է արձագանքել վերոնշյալ հիմնախնդիրներին:

Երաշխավորություն 8. Մշակել ռազմավարական շրջանակներ և ֆինանսավորումը դարձնել կախյալ՝ գործողության պլանից

Ռազմավարական համապարփակ շրջանակի մշակումը թույլ կտա կողմերին միավորել իրենց ջանքերը՝ միմյանց համալրելով և խթանելով ամուր հիմքերի ստեղծումը, որի հետևանքով կմեծանան հասանելի հնարավորությունները:

Երաշխավորություն 9. Միմյանց կապել և խանդավառել գլխավոր որոշում ընդունողներին՝ մեծացնելու կապիտալը

Եվրոպական մակարդակում կան մի քանի հաջողված նախաձեռնություններ, որոնց նպատակն է մեծացնել իրազեկվածությունն ու կարողությունը գլխավոր որոշում ընդունողների շրջանում: Սրա մի վառ օրինակ է Զբաղվածության եվրոպական ռազմավարությունը (ԶԵՌ), որը ներառում է հավասար վերանայման գործողություններ: Դրա շնորհիվ անդամ մի քանի երկրների փորձագետները հավաքվում են միասին՝ ուսումնասիրելու քաղաքականությունների հաջողությունը և այն տարբերակները, որոնք կարող են քաղաքականությունների ներմուծման հնարավորություն տալ անդամ այն պետություններին, որոնք գործ ունեն միևնույն մարտահրավերների հետ: Աշկերտների և ՆՄԿՈՒ այլ ուսանողների շարժունության հիմնախնդրի վերաբերյալ քննարկումը պետք է տեղ գտնի ԵՄ քաղաքականության ավելի լայն նպատակների այնպիսի համատեքստում, ինչպիսին է ցկյանս ուսումնառությունը, իսկ կրթություն-գործարարություն կապը՝ ամրապնդվի:

Իրազեկվածություն

Աշկերտների և ՆՄԿՈՒ այլ երիտասարդների շրջանում շարժունության վերաբերյալ իրազեկվածություն ստեղծելիս բախվում ենք երկու գլխավոր խոչընդոտի: Առաջինը հաղորդակցման և տարածման խնդիրն է, իսկ երկրորդը՝ թույլ ցանցերն ու փորձի ընդհանրությունը: Խիստ կարևոր է, որ առավելագույն իրազեկվածություն ստեղծվի այն միջոցների շնորհիվ, որոնք ուղղված կլինեն և կգրավեն թիրախային համապատասխան հանդիսատեսին: Սրանից բխում է երկու երաշխավորություն:

Երաշխավորություն 10. Մշակել իրական փորձերի վրա հիմնված հաղորդակցման ռազմավարություն

Շարժունության դեսպանները պետք է զերծ լինեն գործողությունների և շահերի մի մեծ շարքից: Ազգային գործակալությունները պետք է որոշարկեն այն անհատներին, ում հաջողությունը մասամբ կարելի է վերագրել արտասահմանում անցկացրած ժամանակահատվածին, և որոնց կերպարը կգրավի թիրախային խմբին: Նրանց դերակատարությունը իրազեկվությանը նպաստելն է՝ ծավալելով այնպիսի քարոզարշավներ, որոնք ի ցույց կդնեն արտասահմանում ստաժավորման իրական առավելությունները:

Երաշխավորություն 11. Մշակել հրապարակայնության քարոզարշավ և օգտագործել զանգվածային լրատվամիջոցներ՝ հաղորդակից դարձնելու թիրախային խմբերին

Աշխատանքի ստաժավորման համար ձեռք բերել հավանական թեկնածուների մեծ թվաքանակ: Հավասար հնարավորությունները և լրատվամիջոցներում մեծ ծավալներով քարոզարշավներն էական են: Ազգային գործակալությունների հետ խորհրդակցության միջոցով հաղորդակցման/զանգվածային լրատվամիջոցների պլան պետք է մշակվի Հանձնաժողովի կողմից, որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր երկրի համար առավելագույնս մեծացնել քարոզարշավների ազդեցությունը:

Իրավական և վարչական խոչընդոտներ

Կան մի շարք միմյանց լրացնող օրենքներ և կանոնակարգեր, որոնք ունեն ազդեցություն ԵՄ շրջանակներում խաչաձև տեղանքային աշկերտություններ և ստաժավորում ապահովելու վրա: Սա վերաբերում է այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են քաղաքացիության իրավունքը, առողջապահությունը, անվտանգությունը և պատասխանատվության ապահովագրությունն աշխատավայրում, ինչպես նաև իրավական և վարչական այլ հիմնախնդիրները: Եթե աշկերտությունն ու ստաժավորումը շատ երկրներում ՆՄԿՈՒ համակարգի կանոնակարգված և լավ ինտեգրված մասն են կազմում, ապա աշկերտությանն ու ստաժավորմանն առնչվող իրավական խնդիրները և անհամապատասխանությունները միայն առաջանում են այն պահին, երբ սահմանները հատվում են: Արդյունքում աշկերտության և ստաժավորման մեջ ներգրավված երիտասարդների իրավական կարգավիճակը բարդանում է: Ստաժավորման որոշ տեսակներ սահմանվում են որպես զբաղվածություն, մնացյալը՝ որպես կրթություն: Սա նշանակում է, որ աշկերտության և ստաժավորման ստեղծումը կարող է լինել բյուրոկրատական և օրինական գործընթաց:

Երաշխավորություն 12. Նկատի ունենալ աշկերտների իրավական կարգավիճակը

Եթե շարժունության ծրագիրը ձևակերպվում է որպես աշխատանքի ստաժավորում մասնավոր կամ պետական ընկերությունում և վարձատրվում է, ապա մասնակցին տրվում է գործառուի /աշխատողի/ կարգավիճակ: Եթե այն ձևակերպվում է որպես աշխատանքի ստաժավորում, և մասնակիցը չի ստանում ոչ մի վարձատրություն, ապա վերջինս չի ունենում հստակ սահմանված սոցիալական և իրավական կարգավիճակ ցանկացած աշխատավայրում որոշ վճռական խնդիրների հետ առնչվելիս: Հենց այս պատճառով անհրաժեշտ է ձևակերպել «աշխատողի» բավական լայնիմաստ սահմանում, որպեսզի պատասխանատվության ապահովագրման ծավալն ընդգրկի աշկերտությունն ու ստաժավորումը:

Երաշխավորություն 13. Մշակել աշխատավայրում առողջապահությանը, անվտանգությանն ու պատասխանատվության ապահովագրությանն առնչվող միջոցներ

Մինչդեռ աշկերտների համար առանձին իրավական կարգավիճակ կսահմանվի, օտարերկրյա աշկերտին ստաժավորման վերցնելիս հնարավոր վտանգներին առնչվող միջոցներ պետք է ձեռնարկվեն:

Երաշխավորություն 14. Յուրացնել քաղաքացիության և արտոնագրերի դիմումների մասին առկա տեղեկատվությունը

Պարզ կիրառման ձևաչափում երիտասարդներին դեպի տեղեկատվություն մուտքի հնարավորության ապահովումը խիստ կարևոր է՝ օգնելու նրանց հասկանալ անդամ այլ երկրներում մասնագիտական ուսուցում իրականացնելու հնարավորությունները: Այս տեղեկատվության մեծ մասն արդեն գոյություն ունի, սակայն հասանելի կամ բավարար որակի չէ:

Գործողություններ շահագրգիռ կողմերի համար

Երաշխավորությունները մի բան են, գործողությունները՝ այլ: Եթե ցանկանում ենք երաշխավորել, որ միջոցները ձեռնարկվում են երաշխավորություններն իրագործելու և ՆՄԿՈՒ վերազգային շարժունության համար դեռևս գոյություն ունեցող առերևույթ խոչընդոտները վերացնելու համար, ապա շահագրգիռ կողմերը պետք է ստանձնեն իրենց պարտականությունները և «գործեն»: Հարկավ, «Գործի՛ր» ծրագիրն առաջին հերթին շոշափում է այն գործողությունները, որոնք կարելի է իրականացնել եվրոպական մակարդակում, այսինքն՝ Եվրոպական Հանձնաժողովի շրջանակներում: Այնուամենայնիվ, շահագրգիռ կողմերից շատերը գործում են ՆՄԿՈՒ և ՆՄԿՈՒ վերազգային շարժունության շրջանում: Ուստի նրանց կողմից ձեռնարկվելիք գործողությունների համար «երաշխավորությունները» ևս ներառված են այստեղ:

Եվրոպական Հանձնաժողով

Եվրոպական Հանձնաժողովը կարող է ունենալ իր դերակատարությունը ՆՄԿՈՒ աշկերտների և այլ երիտասարդների շարժունությունը խթանելու գործում: ԵՀ-ն կարող է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Տրամադրել ավելի շատ ֆինանսներ՝ խթանելու շարժունությունն այն երկրներում, որտեղ ոչ մի պետական կամ ոլորտային ֆինանսավորում չի գործում ներկայումս,
- Հավաքագրել Եվրոպայում մշտադիտարկման հիմնավոր համակարգի միջոցով որոշարկված շարժունության առաջընթացի և միտումների վերաբերյալ տվյալները՝ արձագանքելով շարժունության ամբողջ գործընթացին, այլ ոչ միայն ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերին,
- Աջակցել ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ ազգային քաղաքականության մշակմանը եվրոպական երկրներում Խորհրդի հետ համաձայնության միջոցով,

- Նախաձեռնել համատեղ քաղաքականության մշակում Կրթության և զբաղվածության միջև,
- Խթանել շարժունության վերաբերյալ սոցիալական երկխոսությունը,
- Ստեղծել գործիքներ՝ մեղմացնելու շարժունության փորձում ներգրավված անձանց ռիսկերը /օր.՝ ապահովագրություն, օժանդակող գրություններ, օրինական հիմքեր/,
- Միակցել և տարածել շարժունության փորձերի արդյունքները /գործիքներ, լավագույն փորձեր/,
- Նախաձեռնել ռազմավարական ուսումնասիրություններ շարժունության այնպիսի հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են որակի ապահովումը եվրոպական տեսանկյունից:

Սոցիալական գործընկերներ եվրոպական մակարդակում

Սոցիալական գործընկերների հիմնական դերակատարությունը ՆՄԿՈՒ աշկերտների և երիտասարդ այլ անձանց շրջանում շարժունությանը խրախուսելն ու աջակցելն է: ԵՄ մակարդակում սոցիալական գործընկերներից բանաքաղված համատեղ փաստաթուղթը՝ «Հետադարձ կապ եվրոպական սոցիալական գործընկերներից՝ որպես Ցկյանս ուսումնառության վերաբերյալ Հանձնաժողովի Հուշագրի շուրջ ծավալված խորհրդակցության մի մաս», նշում է, որ սոցիալական գործընկերները քաջատեղյակ են իրենց զբաղեցրած առանցքային կարգավիճակի մասին: Սոցիալական գործընկերները կարող են լինել հանգամանքներին ավելի շատ ընդառաջ գնացող, և մասնավորապես, ոլորտային կազմակերպությունները եվրոպական մակարդակում կարող են աջակցել ՆՄԿՈՒ աշկերտների և երիտասարդ այլ անձանց շարժունությանը՝ ձեռնարկելով հետևյալ միջոցները.

- ՆՄԿՈՒ շարժունության օրակարգի սահմանում և սոցիալական երկխոսության խթանում[8],
- Բնագավառներում և ճյուղերում շարժունության հետագա հնարավոր շահեկանության, առավելությունների վերաբերյալ հետազոտության նախաձեռնում և ֆինանսավորում,
- Մշտադիտարկման մեկնարկում՝ իմի բերելու տվյալ բնագավառի շարժունության համար ֆինանսավորված թվերը,
- ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ ռազմավարական գործողության պլանի մշակում՝ ներառյալ առանցքային բնագավառները,
- Բնագավառից և ճյուղից լավագույն փորձերի, գործիքների և արդյունքների հավաքագրում և տարածում:

---

8 Ինչպես արվել էր 2006թ. սեպտեմբերի 14-ին Բրյուսելում շարժունությանը նվիրված միջոցառման ընթացքում. http://ec.europa.eu/employment_social/social_dialogue/sectoral_en.htm.

Պետական նախարարություններ

Բացի Եվրոպական Հանձնաժողովի նախաձեռնություններին օժանդակելուց, պետական իրավասու մարմինները կարող են նաև խթանել ՆՄԿՈՒ աշկերտների և երիտասարդ այլ անձանց շարժունությունը մասնավորապես հետևյալի միջոցով.

- ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ ռազմավարական քաղաքականությունների մշակում /գործողության ազգային պլան/՝ ուղարկելով ազդանշան ներգրավված բոլոր դերակատարներին,
- Ազգային ծրագրերի և ազգային ֆինանսավորման ստեղծում,
- Համակարգել ու հստակեցնել գործողությունները և համապատասխան նախարարություններից /Կրթության, Զբաղվածության, Տնտեսական հարցերի/ ստանալ համատեղ նախաձեռնությունների նախագծեր՝ ներգրավելով համապատասխան դերակատարների ՄԿՈՒ իրականացնողների և զբաղվածության շրջանում,
- Օժանդակել ՄԿՈՒ ուսումնական ծրագրում վերազգային ստաժավորման ներառման համար օրինական հիմքի ստեղծմանը: Դրա մի մասը վերաբերում է կարողությունների և ուսումնառության արդյունքների ճանաչմանը, վավերացմանն ու վկայագրմանն առնչվող կանոնակարգին այն երկրներում, բնագավառներում և ճյուղերում, որտեղ վերոհիշյալները չեն գործում,
- Շարժունության առավելությունների, խոչընդոտների և հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտության իրականացում,
- Ազգային տարբեր միջնորդ մարմինների միջև փոխվստահության գոտիների և տարբեր երկրների միջև փոխըմբռնման հուշագրի ստեղծում:

Հաստատություններ. Ձեռնարկություններ և ՄԿՈՒ իրականացնողներ

Այս դասի դերակատարները ներառում են ձեռնարկություններին, գործատուներին, ՄԿՈՒ իրականացնողներին, ինչպես նաև միջնորդ այնպիսի կազմակերպություններին, ինչպիսիք են ճյուղային և ոլորտային ցանցերը, զբաղվածության ծառայություններն ու առևտրաարդյունաբերական պալատները: Ներքոնշյալը ներկայացնում է դերակատարներից յուրաքանչյուրին:

Ձեռնարկություններ և գործատուներ

Ընդունելով, որ քայլերը ձեռնարկվելու են միջին մակարդակում՝ գործատուներն այստեղ ունեն իրենց ուրույն դերակատարությունը: Նրանք կարող են օժանդակել ՆՄԿՈՒ աշկերտների և երիտասարդ այլ անձանց շարժունությանը հետևյալի միջոցով.

- Մեծացնել հնարավորությունները՝ ընդունելու աշկերտներ արտասահմանից և ուսուցանվողներին ուղարկելու արտասահման,
- Զարգացնել աշխատավայրի ուսուցանողի կարողությունները /և՛ ՓՄՁ-ներում, և՛ ավելի մեծ ընկերություններում/՝ տրամադրելու ուղղորդում արտասահմանից ժամանած

աշկերտներին /օրինակ՝ վերապատրաստման կամ ուսուցանողներին կարճ ժամանակամիջոցով արտասահման ուղարկելու միջոցով/,

- Արտասահմանում ստաժավորման կոլեկտիվ ծառայության կենտրոնների ստեղծում, օժանդակում և/կամ տարածում,
- Կրթություն իրականացնողների և այլ ձեռնարկությունների հետ ռազմավարական դաշինքների ու ցանցերի ձևավորում՝ կատարելագործելու ստաժավորման որակն ու մատչելիությունը,
- Վերազգային ստաժավորման ներդրումների առավելությունների և շահեկանության մասին տեղեկատվության տարածում՝ մեծացնելու իրազեկվածությունը:

ՄԿՈՒ իրականացնողներ

Եվրոպան բնութագրվում է կրթության և ուսուցման համակարգերի լայն բազմազանությամբ: Տարբերությունները սկսվում են աշկերտների միջին տարիքից, ՆՄԿՈՒ դասընթացների տևողությունից ու կառուցվածքից, ՆՄԿՈՒ-ում ներգրավված մասնակիցների թվաքանակից մինչև ՆՄԿՈՒ առաջարկվող դասընթացների խմբաքանակ կամ թվաքանակ: Էապես տարբերվում է նաև ՄԿՈՒ իրականացնողների կառուցվածքը: Այնուամենայնիվ, Եվրոպայի բոլոր երկրները բախվել են միևնույն մարտահրավերներին, օրինակ՝ արտադրության ուսուցման տեղերի և երիտասարդների շրջանում ՆՄԿՈՒ-ին մասնակցելու շահագրգռվածության պակաս: ՄԿՈՒ դերակատարությունը մրցունակ և համախմբված հասարակության ստեղծմանն օժանդակելն է՝ տալով հմտությունների բարձր մակարդակ ունեցող աշխատուժ, որն ի վիճակի է արձագանքել հարմարակցող հմտությունների պահանջներին գիտելիքի տնտեսությունում:

ՄԿՈՒ իրականացնողները կարող են ունենալ կարևոր դերակատարություն շարժունությունը խթանելու գործում: Նրանց հիմնական օժանդակությունը վերաբերում է.

- Միջազգայնացման և շարժունության ռազմավարության մշակում՝ կապակցված որակի ներքին ենթակառուցվածքի ու ֆինանսավորման հետ,
- Շարժունության կազմակերպման համար անհրաժեշտ անձնակազմի կարողությունների մակարդակի բարձրացում,
- Վաղօրոք ձեռնարկվող հաղորդակցություն ուսումնառուների հետ՝ մեծացնելով տեղեկացվածությունն ուսանողների շրջանում այն մասին, որ ստաժավորումն արտասահմանում հնարավորություն է բոլորի համար,
- Ներդրումներ երկարաժամկետ վերազգային գործընկերություններում՝ ստեղծելով ֆորմալ հիմքեր համագործակցության և ուսումնառուների ու ընկերությունների փոխանակման համար,
- Ստաժավորման որակի ապահովման համակարգի և արտասահմանում ձեռք բերված հմտությունների ճանաչման իրագործում,
- Երաշխավորում, որ հաստատության անձնակազմը ևս ունի փորձված շարժունություն:

Միջնորդ կազմակերպություններ

Միջնորդ կազմակերպությունը կարող է ծառայել որպես կապակցող օղակ դպրոցների և գործատուների միջև: Դա կարող է լինել մեկ կազմակերպություն՝ նորաստեղծ և շահույթ չհետապնդող, առևտրային ընկերություն կամ հանրության մի քանի հաստատությունների միջև համագործակցություն: Նրանք կարող են ապահովել երես առ երես շփում և խորհրդատվություն կամ մասնավորապես առցանց ծառայություն:

Միջնորդի դերակատարությունը կարող է լինել դպրոցներին, ձեռնարկություններին, երիտասարդական կազմակերպություններին աշխատատեղերի և հանրային ռեսուրսների հետ կապակցելը: Հետևյալ համակարգերը ծառայում են որպես միջնորդ կազմակերպությունների օրինակներ՝ վերազգային առկա ցանցեր և ՄԿՈՒ իրականացնողների ու գործատուների գործընկերություններ, ճյուղային և ոլորտային ցանցեր ու ազգային գործակալություններ: Զբաղվածության օրինակները ներառում են հմուտ վարպետներ և առևտրի պալատներ, ուսուցման կենտրոններ, ուսուցման հիմնադրամների ստեղծման համար պատասխանատու կառույցներ, գործարար կազմակերպություններ, ազգային գործակալություններ, թափուր աշխատատեղերի կայքէջեր, ժամանակավոր աշխատանքի գործակալություններ և Պետական զբաղվածության ծառայություններ: Այն պետք է սահմանվի տվյալ իրավիճակի հիման վրա, այսինքն՝ համաձայն անդամ պետությունների համատեքստի:

Միջնորդ կազմակերպությունների միջոցով շարժունություն կազմակերպելու առավելություններից մի քանիսը եվրոպական շարժունության, կատարելագործված արհեստավարժության վերաբերյալ գիտելիքի կուտակման պատճառ են հանդիսանում, ինչպես նաև հանգեցնում են թվով ավելի մեծ գործարքների ավելի ցածր գներով /արժեքի իջեցում կամ նույնիսկ շահույթի հետապնդում/ և շահագրգիռ տարբեր կողմերի միջև «շփման մի կետի»:

Միջնորդ կազմակերպությունները կարող են աջակցել ՆՄԿՈՒ աշկերտների և այլ երիտասարդների շարժունությանը մասնավորապես հետևյալի միջոցով.

- Ստաժավորման կառավարում և արտասահմանում ստաժավորման հնարավորություն ձեռք բերելու գործում ՆՄԿՈՒ աշկերտներին և այլ մասնակիցներին աջակցության տրամադրում,
- Օժանդակություն շարժունություն կազմակերպելիս՝ բոլոր փուլերում /նախապատրաստական աշխատանքներ, կացության ընթացքում և հաշվետվություն/,
- Խրախուսում նորեկներին համապատասխան գործիքների, ցանցերի և փորձերի միջոցով /օրինակ՝ ձևավորելով փորձի, ուսուցման ընդհանրություն/,
- Օժանդակություն որակի ապահովմանը,
- Օժանդակություն հավելյալ ռեսուրսների հայթայթման գործում,

- Հաղորդակցություն. շարժունության առավելությունների մասին իրազեկվածության բարձրացում բոլոր դերակատարների շրջանում /ՆՄԿՈՒ մասնակիցներ, դպրոցներ, գործատուներ/ և շարժունության հնարավորությունների մեծացում,
- Ազգային տարբեր միջնորդ մարմինների միջև փոխվստահության գոտիների և տարբեր երկրների միջև փոխըմբռնման հուշագրի ստեղծում:

Հավելյալ տեղեկություն

Գործիր /MoVE-iT/ ուսումնասիրության արդյունքն են հանդիսանում սույն ամփոփ զեկույցը, վերջնական զեկույցը, մի շարք օժանդակող ուսումնասիրությունները, ինչպես նաև աշկերտների շարժունությունը զարգացնելու գործում ներգրավված դերակատարներին աջակցող մեծ թվով արդյունքները: Որոշ կազմակերպություններ պարտավորվել են մեծացնել ՄԿՈՒ աշկերտների և այլ երիտասարդների առանձին կարիքների վրա հրավիրվող ուշադրությունը. նրանց դիրքորոշումների մասին հաշվետվություններն ավելացվել են զեկույցներին: Բոլոր նյութերը կարելի է ձեռք բերել ծրագրի կայքէջում՝ http://www.europe-move-it.eu.

Ստորև մենք թվել ենք օժանդակող այն բոլոր ուսումնասիրությունները և նյութերը, որոնք ստեղծվել են 2006թ.-ին Գործիր /MoVE-iT/ կոնսորցիումի կողմից:

Գործիր /MoVE-iT/. ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ համեմատական ուսումնասիրություն եվրոպական 33 երկրներում

Սինթեզ-զեկույց

Եվրոպայի ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ երկրների զեկույցներ.
Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխթենշթայն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեցարիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն:

Գործիր /MoVE-iT/. օժանդակող ուսումնասիրություններ

Ուրույն խոչընդոտներ և լուծումներ

Իրավական դաշտին առնչվող արգելապատեր և լուծումներ, իրազեկվածություն և հաղորդակցություն. ապրանքանիշի պլան /brand plan/, ոստնային կայքերի /պորտալներ/ կիրառում համապատասխանեցման մեխանիզմների համար

Շարժունության այլընտրանքային ծրագրերի վերաբերյալ իրավիճակային ուսումնասիրություններ

ՄԿՈՒ Երկկողմ փոխանակման ծրագրեր

Ոլորտային ուսումնասիրություններ

Շարժունություն տուրիզմի, քիմիկատների, արվեստների և արհեստների ոլորտներում /կենտրոնանալով ՓՄՁ-ների վրա/

Շարժունության վերաբերյալ ուսումնասիրություններ Եվրոպայից դուրս համեմատական նպատակների համար

Եվրոպայից դուրս ՆՄԿՈՒ շարժունության վերաբերյալ երկրների զեկույցներ՝ Կանադա, ՄԿՈՒ շարժունության բազմակողմանի համաձայնագիր՝ Կարմիր Կնիք (Red Seal) /Կանադա/

Շահագրգիռ կողմերի հեռանկարներ

Շահագրգիռ կողմերի տեսակետներ. ԵՄ մակարդակում շարժունությանն աջակցելու ցանկություն, Հեռանկարներ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից, EUNEC Դրույթ, EfVET Դրույթ, Դրույթներ տարբեր աղբյուրներից

Առկա գործիքների և գրականության ինվենտարիզացիա

Ամփոփ գրականություն խոչընդոտների և երաշխավորությունների վերանայման մասին, լավագույն փորձերի ընդհանուր պատկեր, ԵՄ օժանդակող գործիքների ընդհանուր պատկեր, աշկերտների, ձեռնարկությունների և ՄԿՈՒ իրականացնողների առկա ուղեցույցների ընդհանուր պատկեր, ստաժավորման և շարժունության աջակցության մասին կայքէջերի ընդհանուր պատկեր

Ուսումնասիրության զեկույցներ

Ուսումնասիրություն. ՄԿՈՒ իրականացնողների տեսակետներ, ուսումնասիրություն. ՄԿՈՒ աշկերտների և այլ երիտասարդների տեսակետներ /հիմնված մի քանի ուսումնասիրությունների վրա/

Գործիր /MoVE-iT/. Նախագծեր լուծումների համար

Գործիքների հավաքածուներ ՄԿՈՒ իրականացնողների /դպրոցներ, ուսուցման կենտրոններ/, ձեռնարկությունների և աշկերտների համար: